ԿԸՀ 2020 թ. Հայաստանի և տարածաշրջանի այլ երկրների արդյունքները

Հայաստանի ԿԸՀ 2020 թ. արժեքը հավասար է **49**-ի իսկ ստանդարտ սխալի չափը հավասար է 3.50-ի: Նախորդ Corruption Perception տարվա համեմատ այն աճել է 7 միավորով, և այդ աճի մեծությամբ այն աշխարհում զիջում է միայն ***Մալդիվյան կղզիներին***, որի 2020թ. ԿԸՀ արժեքը 2019թ.-ի համեմատ աճել է 14 միավորով (29-ից 43): Հայաստանի 2020թ.-ի ԿԸՀ-ի հաշվարկի համար օգտագործված տվյալների մասին տե՛ս սույն փաթեթի «**2020 թ. Կոռուպցիայի ընկալման համաթիվը հաշվարկելու համար օգտագործված աղբյուրները**» նյութը: Գծապատկեր 1-ում ներկայացված են Հայաստանի ԿԸՀ արժեքները 2012թ.-ից մինչև 2020թ. ընկած ժամանակահատվածում:

Գծապատկեր 1.



180 երկիր ներառող ԿԸՀ դասակարգման 2020 թ. աղյուսակում Հայաստանը ***Հորդանանի*** և ***Սլովակիայի*** հետ կիսում է **60-ից 62-րդ տեղերը** (2019 թ. նա 42 միավորով 180 երկրների շարքում կիսում էր **77-ից 79-րդ** տեղերը):

Թրանսփարենսի Ինթերնեշնլի տարածաշրջանային բաժանմամբ Հայաստանը, ինչպես և նախկինում, ներառված է ***Արևելյան Եվրոպա –Կենտրոնական Ասիա*** տարածաշրջանի մեջ:

Աղյուսակ 1-ում բերված է Արևելյան Եվրոպա –Կենտրոնական Ասիա տարածաշրջանի 2020թ. ԿԸՀ դասակարգման աղյուսակը:

Աղյուսակ 1.

Երկրի զբաղեցրած տեղը	Երկիր	2020 թ. ԿԸՀ արժեքը	Աղբյուրների թիվը	AFDB	BF (SGI)	BF (TI)	EIU	FH	GI	IMD	PERC	PRS	VDEM	WB	WEF	WJP
45	Վրաստան	**56**	5			53		50	47				69			59
60	Հայաստան	**49**	6			45		44	47			32	63		60	
63	Բելառուս	**47**	7			37	55	33	59			32	56			59
67	Մոնտենեգրո	**45**	5			53		44	47				30		51	
86	Թուրքիա	**40**	9		26	37	37		47	53		41	26		57	37
94	Ղազախստան	**38**	9			33	20	24	47	61		58	17		47	38
94	Սերբիա	**38**	8			45	37	50	35			32	28		40	35
104	Ալբանիա	**36**	8			37	37	42	35			41	32		37	30
104	Կոսովո	**36**	6			37		36	35				41	35		36
111	Բոսնիա և Հերցոգովինա	**35**	7			37	37	44	35				23		29	39
111	Հյուսիսային Մակեդոնիա	**35**	7			41	20	47	35				28		32	40
115	Մոլդովա	**34**	9			29	37	36	47			32	41	27	30	31
117	Ուկրաինա	**33**	9			41	20	36	35	35		41	26		30	34
124	Ղրղզստան	**31**	7			37		27	35				25	35	26	29
129	Ադրբեջան	**30**	7			29	20	21	35			24	12		69	
129	Ռուսաստան	**30**	9			29	20	24	35	39		24	25		38	34
146	Ուզբեկստան	**26**	7			29	20	24	22				25	27		37
149	Տաջիկստան	**25**	6			17		21	22				13	18	57	
165	Թուրքմենստան	**19**	5			17	20	21	22				17			

Ինչպես երևում է աղյուսակից, տարածաշրջանի19 երկրների շարքում Հայաստանը զբաղեցնում է **2-րդ** տեղը (2019 թ. նա գրավում էր **4-րդ** տեղը): Այս տարածաշրջանում Հայաստանը,

զիջում է միայն ***Վրաստանին*** որի ԿԸՀ 2020թ. արժեքն է **56** (համաշխարհային դասակարգման աղյուսակում կիսում է **45**-ից **47**-րդ տեղերը):

Իր հարևան երկրներից Հայաստանն զիջում է միայն ***Վրաստանին***: Ինչպես և նախորդ տարում, Հայաստանն առաջ է իր մյուս երեք հարևաններից՝ ***Թուրքիայից*** (**40** միավոր՝ **86**-ից **91**-րդ տեղեր), ***Ադրբեջանից*** (**30** միավոր՝ **129**-ից**133**-րդ տեղեր) և ***Իրանից*** (**25** միավոր՝ **149**-ից **156**-րդ տեղեր): Գծապատկեր 2-ում ներկայացված են Հայաստանի և իր հարևան երկրների ԿԸՀ 2012-2020 թթ. արժեքները:

Գծապատկեր 2.



ԵԱՏՄ անդամ մյուս բոլոր երկրների ԿԸՀ արժեքները շարունակում են ցածր մնալ Հայաստանի ԿԸՀ արժեքից: Մասնավորապես, **Բելառուսի** 2020 թ. ԿԸՀ արժեքը **47** միավոր է (**63**-ից **66**-րդ տեղեր), ***Ռուսաստանինը՝ 30*** (**129**-ից **133**-րդ տեղեր), ***Ղրղզստանինը***՝ **31** (**124**-ից **128**-րդ տեղեր),

իսկ ***Ղազախստանինը՝*** **38** միավոր (**94**-ից **101**-րդ տեղեր): Գծապատկեր 3-ում բերված են Հայաստանի և ԵԱՏՄ մյուս երկրների ԿԸՀ 2012-2019 թթ. արժեքները:

Գծապատկեր 3